

## «ԿԵԿ» ԿԱՄ ՈՎ ՈՎ Է

Գ.Վահանյան

Մոտ 30 տարի առաջ «Ազգ» թերթում այս հրապարակման հեղինակը հրապարակեց «КЕК» խաղը (Ով ով է): Խաղի բուն իմաստն այն էր, որ առաջարկվում էին հայտնի քաղաքական և հասարակական գործիչների, իմաստունների և փիլիսոփաների գաղափարներ, ասացվածքների հատվածներ, որոնց հեղինակին պետք է գուշակեր ընթերցողը: Համեմատության համար ներկայացվեցին նաև ճիշտ պատասխանները:

Ներկայումս հեղինակը որոշել է կրկին առաջարկել այս խաղը: Միննույն ժամանակ, մտքերի աղբյուր դարձան ոչ միայն հայկական էլեկտրոնային լրատվամիջոցները, այլև ինտերնետային ռեսուրսները և հեռուստատեսությունը:

**«ԿԵԿ»-ի** աղյուսակի առաջին սյունակում ընտրված մտքերն են, երկրորդում՝ ընթերցողների կողմից առաջարկված հեղինակների անունները, իսկ երրորդ սյունակում՝ իրական հեղինակները:

Այսպիսով, մենք այսօր սկսում ենք «Ով ով է» հրատարակությունը (07/04/2020): Խաղացե՛ք:

## “КЕК” ИЛИ КТО ЕСТЬ КТО

Г. Ваганян

Примерно 30 лет тому назад в газете “Азг” автор настоящей публикации впервые опубликовал игру “КЕК” (Кто есть кто). Суть игры заключалась в том, что предлагались мысли известных политических и общественных деятелей, мудрецов и философов, в том числе фрагменты пословиц, автора которого читателю необходимо было определить самостоятельно. Представлялись также правильные ответы для сравнения.

В настоящее время с появлением электронных СМИ, автор решил вновь предложить эту игру. При этом источником мыслей стали не только армянские электронные СМИ, но и Интернет ресурсы, а также телевидение. В первой колонке прилагаемой таблицы КЕК записываются мысли “вслух”, во второй – предложенные читателями имена авторов, а в третьей – комментарии, которые “подсказывают” или ведут к имени

реального автора. Итак, с сегодняшнего дня мы начинаем публикацию “Кто есть кто” (04.07.2020). Играйте на здоровье.

**1.КЕК.2020**

N	Առակներ, մտքեր, գաղափարներ	Հեղինակի անունը՝ ըստ ընթերցողի	Ճշմարիտ պատասխան կամ հուշում
1	Պետության մեջ մարդիկ կարող են երջանիկ լինել միայն այն դեպքում, եթե կառավարիչները գիտնականներ են	Ստալին	<i>Թոմաս Մոր</i>
2	Ով գիտի՝ չի խոսում, ով խոսում է՝ չգիտի	ՀՀ երրորդ նախագահ	<i>Արիստոտել</i>
3	Ճիշտ կառավարման ձևերն են՝ միապետությունը, արիստոկրատիան և հանրապետությունը, իսկ սխալ կառավարման ձևերն են՝ բռնապետությունը, օլիգարխիան և դեմոկրատիան	ՀՀ Ազգային ժողովի նախկին կին փոխնախագահ	<i>Արիստոտել</i>
4	Ճշմարտությունը, որն աստվածային Հայտնությունն է, մեկն է, սակայն տարբեր են դրա ընկալման ու մեկնաբանման ձևերը	ՀՀ սահմանադրական դատարան նախկին անդամներ	<i>Աստված խոսք</i>
5	Ստեղծել...նշանակում է քանդել միջակության պարիսպները (քանդել և ոչ թե գրավել), փլատակել տգիտության ու անգիտության պարիսպները (փլատակել և ոչ թե վերաշինել)...	ՀՀ առաջին նախագահ	<i>Պարոյր Սևակ</i>
6	Մի ժողովուրդ, որի որդիները հավասար չեն օրենքի և մահվան առջև՝ հաղթական հայրենիք չի ունենա	Վազգեն Սարգսյան	<i>Գարեգին Նժդեհ</i>
7	Տղաք, ինչ որ ունիք, - հոգեկան, մտային արժանիքներ կամ նյութապես հարստություն, - կպատկանեն ձեր ժողովրդին, - անոր վերադարձնեք պիտի	ՀՀ վարչապետ	<i>Լևոն Շանթ</i>
8	Ա~խ լեզուն, լեզուն, լեզուն որ չըլի~ մարդ ընչի նման կըլի... Ձեզ եմ ասում, ձե~զ, հայոց նորահաս երիտասարդք, ձեր անումին մեռնի~մ, ձեր արևին ղուրբա~ն. Տասը լեզու սորվեցե~ք, ձեր լեզուն, ձեր հավատը դայիմ բռնեցե~ք	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եվ սպորտի նախարար	<i>Խաչատուր Աբովյան</i>
9	Տգիտության պատճառով հայերը մոռացել են ազատության ու լուսավորության վեհ գաղափարները	դոկտոր, պրոֆեսոր Լ. Շիրինյան	<i>Հովսեփ Էմին</i>

10	Վայ նրան, որ տուն է շինում ոչ արդարությանը և վերնահարկ է կառուցում ոչ իրավունքով	ՀՀ երկրորդ նախագահ	Փավստոս Բուզանդ
11	Դատավորին ՍԴ շենք մտնել չթույլատրելն ուղղակիորեն ՀՀ Քրեական օրենսգրքով հետապնդվող արարք է	ՀՀ ՍԴ դատավոր	Դավիթ Հարությունյան
12	Նիկոլ Փաշինյանին հաջողվել է մինչև վերջին բջիջը պառակտել մեր հասարակությանը	ՀՀ ազգային ակադեմիա	Անդրանիկ Թևանյան
13	Երկրագնդի վրա ոչ ոք չի շահել, երբ պատերազմ է հայտարարել ՋԼՄ-ներին	Երևանի մամուլի ակումբի նախագահ	Արմինե Օհանյան
14	Արտաքին ուժերի կողմից երկու խնդիր է դրված՝ պոկել Հայաստանը ՌԴ-ից և տրոհել ժողովրդի միասնությունը ազգային արժեքների ու հարցերի շուրջ	Վլադիմիր Սոլովյեվ	Վազգեն Մանուկյան
15	Փաշինյանն անցավ «կարմիր գիծը», ընդդիմադիր ուժերի համախմբումն անխուսափելի է	Հատուկ ծառայությունների նախկին ղեկավար	“Թերթի” վերլուծական
16	Եթե ձեզ դուր չի գալիս իմ խոսքը, կա՛մ մի լսեք, կա՛մ քննադատեք, նման փոքրոգի քայլերով ոչ կվախեցնեք, ոչ իմ խոսքի կշիռը կթուլանա	“Ազատություն” ռադիոկայան	“Երեկոյան լուրեր Արրահամ Գասպարյանի հետ”
17	Նիկոլ Փաշինյանն այսօր ունի ընդամենը 11-13 % իրական, չնկարած վարկանիշ	ՀՀ-ում «Գելլափի» լիիրավ անդամ կազմակերպություն	Սամվել Ֆարմանյան
18	Ջայրացած ամբոխները փորձում են քանդել մեր երկրի հիմնադիրների արձանները	Միխայիլ Գորբաչև	Դ. Թրամփ
19	Ջերմ շնորհավորանքներ եմ հղում Ձեզ և Միացյալ Նահանգների բարեկամ ժողովրդին՝ Անկախության օրվա առթիվ	Վլադիմիր Պուտին	ՀՀ վարչապետ
20	Ջերմորեն շնորհավորում եմ Ձեզ և ամերիկյան բարեկամ ժողովրդին՝ Ամերիկայի Միացյալ Նահանգների Անկախության օրվա առթիվ	ՀՀ վարչապետ	ՀՀ Նախագահ
21	Понимаю тех граждан, кто проголосовал против (О поправках к конституции РФ)	Оппозиция	В. Путин